| Տարեկան ներքին ինքնագնահատման սանդղակի արդյունքների հիման վար ստեղծել նյութական խրախուսման մեխանիզմներ | | | |
| Գնահատել մասնագետների կատարողականը | | | |
| Պարգևատրել մանկավարժական աշխատողներին ըստ կատարողականի ցուցանիշների | | | |
| Դպրոցում՝ տեսանելի հատվածում, ունենալ նվաճումների, ձեռքբերումների պատ, որտեղ կարտացոլվեն աշխատակազմի ձեռքբերումները | | | |
| Ծնողական, համադպրոցական ընդհանուր ժողովներում, հայտարարությունների անկյունում լուսաբանել աշխատակազմի ձեռքբերումները և նվաճումները | | | |

## 1.10 Ուսումնական նպատակներով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից:

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է պետբյուջեից՝ ըստ իրականացվող հանրակրթական ծրագրի 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանի՝ կախված սովորողների թվից, իսկ 2023թ. սեպտեմբերից, փոփոխությունների համաձայն, ֆինանսավորումը կրիականացվի դասարան

թվով, ինչը կբալանսավորի հաստատության ֆինանսական վիճակը, և դպրոցը կկարողանա իրականացնել իր գործառույթներն ի շահ աշակերտի, մանկավարիժի:

Հաստատության ֆինանսատնտեսական գործունեության յուրաքանչյուր տարվա նախահաշիվը կազմվել է սահմանված կարգով՝ պահպանելով հանրակրթական ուսումնական հաստատության բյուջետային օրացույցին ներկայացվող պահանջները:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ Կոտայիք մարզպետարանի /լիազոր մարմին/ կողմից հաստատության ՝ յուրաքանչյուր տարվա ֆինանստնտեսական գործունեության նախահաշիվը, հաստիքացուցակը հաստատվելուց հետո տեղադրվել է դպրոցի վեբ կայքում՝ https://jraber.schoolsite.am/: Կայքում է տեղադրվել նաև հաստատության ֆինանսատնտեսական եռամսյա հաշվետվությունները: Վստահորեն կարող ենք ասել, որ հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը եղել է թափանցիկ և հստակ: Շնորհիվ սովորողների թվի աճի /նախորդ 3 տարիների համեմատ/ բարելավվել է դպրոցի ֆինանսատնտեսական վիճակը: Դպրոցը աշխատել է առանց ֆինանսական խնդիրների, նոր ֆինանսական տարի է մտել բյուջեում ունենալով տնտեսած գումար: Ուսուցիչների դրույքաչափը կազմում է 110000 դրամ:

Հաստատության տվյալ տարվա բյուջեի նախագիծը՝ ըստ հաստատության կանոնադրության պահանջի, դրվում է մանկավարժական, ծնողական, աշակերտական և կառավարման խորհուրդներում քննարկման՝ առաջարկություններ ստանալու նպատակով, ապա ներկայացվում է լիազոր մարմի հաստատմանը: Հաստատության գլխավոր հաշվապահը պատասխանատու ձևով վարել է հաշվապահական հաշվառումը, ժամանակին են կազմվել ֆինանսական հաշվետվությունները և ներկայացվել լիազոր մարմին: Դպրոցում եղած և հետագայում ձեռք բերված գույքը հաշվառված է, յուարքանչյուր տարի կատարվում է գույքագրում: Վերջին 5 տարիներին, յուրաքանչյուր տարվա վերջին, ամբողջ աշխատակազմը պարգևատրվել է միանվագ դրամական խրախուսանքով: Դպրոցը չունի ֆինանսական պարտքեր: Դպրոցի բյուջեն ունի բավարար հնարավորություններ: Յուարքանչյուրր ամսվա վերջին օրը, իսկ անհնարինության դեպքում մինչև հաջորդ ամսվա առաջին աշխատանքային օրը աշխատակազմը ստացել է աշխատավարձ: Բյուջետային հատկացումների և ծախսերի պլանավորումը և իրականացումը կատարվել է արդյունավետ: Բյուջեի խնայողությունների հաշվին դպրոցում կատարվել են մի շարք աշխատանքներ՝ վերանորոգվել են դասասենյակներ, գրադարանը, գրադարանիի համար ձեռք է բերվել նոր դարակաշարեր, ձեռք է բերվել նոր նոութբուք, բազմաֆունկցիոնալ տպիչ, բարձրախոսերի հավաքածու, ճաշարանի սեղան-աթոռ, սպասք, բենզինային խոտհնձիչ սարք և այլն: Դպրոցը պլանավորում է բյուջեն՝ հաշվի առնելով անձնակազմի կարիքները, հաստատության ուսումնական պլանը, ռեսուրսները, ենթակառուցվածքների պահպանումը և սովորողների կարիքները: Դպրոցի ծախսերը կառավարելի են և հիմնականում հատկացնում են այն ոլորտներին, որոնք մեծ ազդեցություն ունեն սովորողների ուսման և զարգացման վրա: Դպրոցը չունի արտաբյուջե, ձեռնարկատիրական գործունեությամբ չի զբաղվում, չի մասնակցում դրամաշնորհային ծրագրերի, չի իրականացնում տարածքի վարձակալություն՝ ուսումնադաստիարակչական նպատակներով:

**Ստորև ներկայացնում եմ ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը ընթացիկ և վերջին երկու տարիների համար**

| Անվավանում | 2021թ. | 2022թ. | 2023թ. | Փոփոխության դիմանկիկան /աճ կամ նվազում/ |
|---|---|---|---|---|
| Աշակերտների թիվ | 51 | 50 | 43 | Նվ. |
| Եկամուտներ, որից` /հազ. դրամ/ | 31108.4 | 31985,2 | 31060.0 | Նվ. |
| Տարրական ընդհանուր կրթություն | 9663.5 | 9748.6 | 9943.6 | Աճ |
| Հիմնական ընդհանուր կրթություն | 13973.2 | 15238.2 | 14138.9 | Նվ. |
| Միջնակարգ ընդհանուր կրթություն | 6643.5 | 5629.3 | 5685.6 | Աճ |
| Որակավորման տարակարգ ստացած ուսուցիչների հավելավճարի տրամադրում | 99.2 | 92.7 | 132 | Աճ |
| Ուսուցիչների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում | 684.2 | 1156.4 | 1063.9 | Նվ. |
| Մանկավարժներ վերապատրաստման ծառայություն | 44.8 | 120 | 96 | Նվ. |
| Աշխատավարձ | 28397.4 | 28199.5 | 26916.7 | Նվ. |
| Էներգետիկ ծառայություններ | 868.9 | 889.2 | 1000 | Աճ |
| Կոմունալ վճարումներ/ջուր, աղբ, կապ/ | - | - | - | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մասնագիտական ծառայություններ | 208.2 | 458.2 | 695 | Աճ |
| Ընթացիկի նորոգում | - | 535.6 | 450 | Նվ. |
| Նյութերի ձեռքբերում | 324 | 288.8 | 244.5 | Նվ. |
| Սննդի ձեռքբերում | - | 267.6 | 285.5 | Աճ |
| Վարչական գույք, սարքավորումներ | 416.9 | 178.9 | 150 | Նվ. |
| Այլ ծախսեր | 263 | 293.5 | 623 | Աճ |

- ✓ Աշակերտների թվի նվազումով պայմանավորված, պակասել է նաև եկամուտներն ու ծախսերը: Աշակերտների թվի նվազման պատճառ է հանդիսացել 44-օրյա պատերազմի ժամանակ Հայաստան եկած և հետագայում Արցախ վերադարձած սովորողների թիվը:
- ✓ Աշխատավարձի ընդհանուր ֆոնդը կազմել է 2021թ.՝ 91.3%   , 2022թ.՝ 88.2%   , 2023թ.՝ 86.7%:
- ✓ Տարիների ընթացքում տեղի են ունեցել մանկավարժների փոփոխություն, որոնց մեծ մասը՝ 13 ուսուցիչ, բնակվում է Աբովյան քաղաքում: Դրա հետևանքով ավելացել են ուսուցիչներին տրամադրվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցման գումարի չափը:
- ✓ Մասնագիտական զարգացման և այլ մասնագիտական ծառայությունների ծախսերի աճը պայմանավորված է վերապատրաստվող ուսուցիչների թվաքանակի աճով:
- ✓ Էներգետիկ ծառայությունների ծախսերի աճը պայմանավորված է եղանակային անբարենպաստ պայմանների հետ, քանի որ ՙՙՋրաբերի միջնակարգ դպրոց՚՚ ՊՈԱԿ-ը գտնվում է լեռնային բնակավայրում:
- ✓ Ընթացիկ նորոգման համար հատկացված ծախսերը պայմանավորված են տվյալ պահին արիրաժեշտ ընթացիկի նորոգման առաջնահերթությունով: 2022թ. վերանորոգվել՝ դպրոցի ճաշարանը, վերակառուցվել է սննդի պահեստը:
- ✓ 2021թ. նյութերի ձեռքբերման ծախսի աճը պայմանավորված է համավարակով:
- ✓ Դպրոցը 2022թ.-ին սննդի ձեռքբերման համար ֆինանսավորվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը, իսկ 2023թ. հունվարից սկսած՝ առաջին անգամ սկսվել է ֆինանսավորվել պետական բյուջեից:
- ✓ 2021թ. ձեռք է բերվել համակարգիչ, բազմաֆունկցիոնալ տպիչ սարք, բարձրախոսերի հավաքածու, պահարաններ, իսկ 2022թ-ին՝ ճաշարանի համար սեղան-աթոռներ:
- ✓ Այլ ծախսեր հոդվածում ներառված է անապահով ընտանիքների և Արցախից եկած սովորողների դասագրքերի գումարը:

| Ուսումնական նպատակներով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| ✓ Հաստատության տվյալ տարվա բյուջեի նախագիծը՝ ըստ հաստատության կանոնադրության պահանջի, դրվում է մանկավարժական, ծնողական, աշակերտական և կառավարման խորհուրդներում քննարկման՝ առաջարկություններ ստանալու նպատակով, ապա ներկայացվում է լիազոր մարմի հաստատմանը<br>✓ Հաստատության գլխավոր հաշվապահը պատասխանատու ձևով վարում է հաշվապահական հաշվառումը, ժամանակին կազմում ֆինանսական հաշվետվությունները և ներկայացվուն են լիազոր մարմին<br>✓ Դպրոցում եղած և հետագայում ձեռք բերված գույքը հաշվառված է<br>✓ Յուարքանչյուր տարի կատարվում է գույքագրում<br>✓ Վերջին 5 տարիներին, յուրաքանչյուր տարվա վերջին, ամբողջ աշխատակազմը պարգևատրվել է միանվագ դրամական խրախուսանքով<br>✓ Դպրոցը չունի ֆինանսական պարտքեր<br>✓ Դպրոցի բյուջեն ունի բավարար հնարավորություններ<br>✓ Յուարքանչյրուր ամսվա վերջին օրը, իսկ անհնարինության դեպքում մինչև հաջորդ ամսվա առաջին աշխատանքային օրը աշխատակազմը ստացել | ✓ Դպրոցը չունի արտաբյուջե<br>✓ Դպրոցը ձեռնարկատիրական գործունեությամբ չի զբաղվում<br>✓ Դպրոցը չի մասնակցում դրամաշնորհային ծրագրերի<br>✓ Դպրոցը չի իրականացնում տարածքի վարձակալություն՝ ուսումնադաստիարակչական նպատակներով |

| | |
|---|---|
| է աշխատավարձ<br>✓ Բյուջետային հատկացումների և ծախսերի պլանավորումը և իրականացումը կատարվել է արդյունավետ<br>✓ Բյուջեի խնայողությունների հաշվին դպրոցում կատարվել են մի շարք աշխատանքներ՝ վերանորոգվել են դասասենյակներ, գրադարանը, գրադարանիի համար ձեռք է բերվել նոր դարակաշարեր, ձեռք է բերվել նոր նոութբուք, բազմաֆունկցիոնալ տպիչ, բարձրախոսերի հավաքածու, ճաշարանի սեղան-աթոռ, սպասք, բենզինային խոտհնձիչ սարք և այլն<br>✓ Դպրոցը պլանավորում է բյուջեն՝ հաշվի առնելով անձնակազմի կարիքները, հաստատության ուսումնական պլանը, ռեսուրսները, ենթակառուցվածքների պահպանումը և սովորողների կարիքները<br>✓ Դպրոցի ծախսերը կառավարելի են և հիմնականում հատկացնում են այն ոլորտներին, որոնք մեծ ազդեցություն ունեն սովորողների ուսման և զարգացման վրա | |

## Նպատակ

1. Ունենալ կայուն բյուջե և արտաբյուջե

**Խնդիրներ**

1. Բյուտջետային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործում
2. Գտնել հովանավորներ
3. Համայնքի հետ համագործակցելու առավել գործուն և փոխշահավետ ուղիներ

| Ռիսկեր | Ռիսկերը մեղմող կամ չեզոքացնող գործողություններ |
|---|---|
| ✓ Արտաբյուջետային միջոցների չձևավորվելը | ✓ Աշխատանք տանել արտաբյուջետային միջոցները ձեռնարկող ծրագրեր իրականացնելու համար |
| ✓ Հովանավորների կողմից ներդրումներ կատարելու մոտիվացիայի պակաս | ✓ Հետևողակ և կառուցողական գործիքակազմի մշակում |
| ✓ Համայնքը կխոստանա, բայց հետագայում չի կատարի իր խոստումը | |

| Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, ֆինանսավորման աղբյուրները | Նշումներ |
|---|---|---|---|---|
| Պլանավորել գնումների կազմակերպման և բյուջեի բաշխման գործընթացը | Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, մանկավարժական համակազմ, հաշվապահ, խորհրդակցական մարմիններ | 2023-2028թթ. | Համագործակցությանը նպաստող նպաստավոր պայմաններ<br>Պետական բյուջե | |
| Իրականացնել ֆինանսատնտեսագիտական գործունեության վերանայումներ և ճշգրտումներ | Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, հաշվապահ | 2023-2028թթ. | Համագործակցությանը նպաստող նպաստավոր պայմաններ, նախահաշիվ<br>Պետական բյուջե | |
| Ֆինանսական միջոցները օգտագործել նպատակային ուղղություններով | Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, հաշվապահ | 2023-2028թթ. | Նախահաշիվ, պլանավորված բյուջե<br>Պետական բյուջե | |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ | | |
|---|---|---|---|
| | **Կատարված չէ /0%/** | **Կատարված է մասամբ /50%/** | **Կատարված է ամբողջ ծավալով /100%/** |
| | **V** | **V** | **V** |
| Պլանավորել գնումների կազմակերպման և բյուջեի բաշխման գործընթացը | | | |
| Իրականացնել ֆինանսատնտեսագիտական գործունեության վերանայումներ և ճշգրտումներ | | | |
| Ֆինանսական միջոցները օգտագործել նպատակային ուղղություններով | | | |

## 1.11 Դպրոցի խորհրդակցական մարմինները:

**Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցակն մամիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական /հոգաբարձուների, շրջանավարտների/ մամիններ:**

**<u>Ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդ</u>**

‘‘Ջրաբերի միջնակարգ դպրոց’’ ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդը կազմված է 16 անդամներից, որոնք ունեն բարձրագույն կրթություն: Մանկավարժական խորհրդում  բարոյահոգեբանական վիճակը գտնվում է բարձր մակարդակի վրա: Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները մանկավարժական խորհրդի անդամ են: Մանկավարժական խորհուրդը, նախարարության սահմանած կարգով, իր կազմից, փակ քվեարկությամբ ընտրում է խորհրդի անդամներ: Ընտրված են համարվում երկու առավել ձայն հավաքած ներկայացուցիչները:

**Ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը քննարկում է.**

- Հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան, ապահովելով նրանց կյանքիչ և առողջության պահպանումը:
- Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահեգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ եթե առկա է ծնողի ստորագրած համաձայնագիրը, կամ  խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումը
- Կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը և սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները
- Ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական աշխատանքների կազմակերպման, ուսումնական խմբակների, երկարօրյա խմբերի և ուսումնական կաբինետների ձևավորման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման հարցերը:
- Ուսումնական հաստատությանը փորձաքննության տրամադրված կամ իր կողմիցմշակված հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, դպրոցի ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները և այլ նյութեր:
- Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և հաշվետվությունը, դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական /տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի/ ծառայությունների մատուցման հարցեր:
- Ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

**Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում**

- Դպրոցի աշխատանքային ռեժիմը և աշխատանքային շաբաթվա տևողությունը սահմանելու,
- սովորողների ընտրությամն 10-12-րդ դասարաններում ուսումնական խմբակների ձևավորման,

- սովորողներին դասարանից դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու,
- սովորողների քննություններին թույլատրելու, գովասանագրով պարգևատրելու,
- որևէ առարկա ուսումնասիրելուց ազատելու,
- բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի,
- սովորողներին վերաքննություններ նշանակելու կամ տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու,
- դպրոցի շրջանավարտներին հիմնական և միջնակարգ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու,
- օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խչախուսանքիմիջոց կիրառելու,
- դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և այն ներկայացնում տնօրենին՝ հաստատման,
- դպրոցի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

**Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է դպրոցի տնօրենը, որն ի պաշտոնե մանակավարժական խորհրդի նախագահն է: Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրում է մանկավարժական խորհրդի անդամներից ընտրված մշտական քարտուղարը, որի բացակայության դեպքում ընտրվում է նոր քարտուղար: Քարտուղարը պատասխանատու է մանկավարժական խորհրդի արձանագրությունների բարեխիղճ կազմման համար: Նիստի արձանագրությունը կազմվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում և ստորագրվում խորհրդի նախագահի ու քարտուղարի կողմից: Մանկավարժական խորհրդի նիստը հնարավորության կամ անհրաժեշտության դեպքում կարող է ձայնագրվել:**

**Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն 2 ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր՝**

- **տնօրենի նախաձեռնությամբ**
- **մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ**
- **լիազորված մարմնի նախաձեռնությամբ**

Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ / սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ/ և այլ անձինք: Դպրոցի տնօրենը մանկավարժական խորհրդի նիստից առնվազն 3 օր առաջ գրավոր ծանուցմամբ տեղեկացնում է մանկավարժական խորհրդի նիստի անցկացման տեղի, օրի, ժամի և օրակարգի մասին: Մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ: Մանկավարժական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան

մասնակցում է մանկավարժական խորհրդի անդամների թվի կեսից ավելին, իսկ խորհրդի անդամների ընտրության ժամանակ՝ առնվազն 2/3-ը: Մանկավարժական խորհրդի որոշումները ընդունվում են քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամնիերի ձայների մեծամանությամբ: Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի 1 ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է: Մանկավարժական խորհրդի որոշումների կատարումը ապահովում է դպրոցի տնօրենը Լարդյունքների մասին պարբերաբար զեկուցում է մանկավարժական խորհրդին: Մանկավարժական խորհուրդը վերջին հինգ տարիների ընթացքում միջին հաշվով գումարել է 11 նիստ՝ հերթական և արտահերթ: Բոլոր նիստերը եռօրյա ժամկետում արձանագրվել է մանկավարժական խորհրդի քարտուղարի կողմից: Մանկավարժական խորհուրդն իր աշխատանքները իրականացնում է, բազմակարծիք, նեռարական և մասնակցային արժեքային գործելավոճով: Գումարված նիստերի արդյունքում կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով աշխատողի պաշտոնային նկարագիրը և աշխատանքային պայմանագրով սահմանված կետերը: Էլեկտրոնային մատյանները լրացնում են գրեթե անթերի, առանց ուշացումների:Մանկավարժական խորհրդի որոշումները կայացվում են հաշվի առնելով յուրաքանչյուրի կարծիքը և ձայնը: Մանկավարժները իրենց հաշվետվությունները ներկայացնում են թղթային տարբերակով: Ավագ սերնդի մանկավարժները դժվարությամբ են օգտվում ՏՀՏ գործիքներից:

| Ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդի վերլուծություն | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| ✓ Բոլոր նիստերը եռօրյա ժամկետում արձանագրվել է մանկավարժական խորհրդի քարտուղարի կողմից<br>✓ Մանկավարժական խորհուրդն իր աշխատանքները իրականացնում է, բազմակարծիք, նեռարական և մասնակցային արժեքային գործելավոճով<br>✓ Գումարված նիստերի արդյունքում կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով աշխատողի պաշտոնային նկարագիրը և աշխատանքային պայմանագրով սահմանված կետերը<br>✓ Մանկավարժական խորհրդի որոշումները կայացվում են | ✓ Մանկավարժները իրենց հաշվետվությունները ներկայացնում են թղթային տարբերակով<br>✓ Ավագ սերնդի մանկավարժները դժվարությամբ են օգտվում ՏՀՏ գործիքներից |

| | |
|---|---|
| հաշվի առնելով յուրաքանչյուրի կարծիքը և ձայնը<br>✓ Էլեկտրոնային մատյանները լրացնում են գրեթե անթերի, առանց ուշացումների | |

**Նպատակներ**

1. Ունենալ մանկավարժների հաշվետվությունների էլեկտրոնային բազա
2. Օգնել ՏՀՏ գործիքներից դժվարությամբ օգտվող ավագ սերնդի մանկավարժներին

**Խնդիրներ**

1. Էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացում
2. ՏՀՏ գործիքակազմին ոչ լիարժեք տիրապետում ավագ սերնդի ուսուցիչների կողմից

| Ռիսկեր | Ռիսկերը մեղմող կամ չեզոքացնող գործողություններ |
|---|---|
| ✓ Մանկավարժները կթերանան էլենտրոնային հաշվետվություններ ներկայացնելու հարցում<br>✓ Ավագ սերնդի մանկավարժների մոտ մոտիվացիայի պակաս | ✓ Կազմել հաշվետվություններ ներկայացնելու հստակ ձևաչափ, որը կհեշտացնի մանկավարժների աշխատանքը<br>✓ Անհատական աշխատանք տանել յուրաքանչյուրի հետ՝ բացատրելով ՏՀՏ գործիքակազմի տրիապետման կարևորության մասին |

| Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, ֆինանսավորման աղբյուրները | Նշումներ |
|---|---|---|---|---|
| Սեմինարի կազմակերպում ՝՝Ինչպես կազմել էլեկտրոնային հաշվետվություն՚՚ թեմայով | Տնօրեն, օպերատոր, ինֆորմատիկայի ուսուցիչ | 2024թ. մարտի 25-30 | Համապատասխան կահավորված լսարան,ՏՀՏ միջոցներ, համապատասխան կարողունակություններ ունեցող աշխատակից | |
| Ստեղծել էլեկտրոնային հարթակ հաշվետվությունները տեղադրելու համար | Տնօրեն,օպերատոր | 2023թ. դեկտեմբերի 20-25 | Համակարգիչ, ինտերնետ կապ | |
| Կազմել հաշվետվություններ ներկայացնելու հստակ ձևաչափ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, օպերատոր | 2023թ. դեկտեմբերի 20-25 | Համակարգիչ | |
| Ձևավորել ՏՀՏ գործիքակազմին տիրապետող ուսուցիչների խումբ, ովքեր կօգնեն ավագ սերնդի ներկայացուցիչներին | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ | 2024թ. հունվար, պարբերաբար | ՏՀՏ գործիքակազմ, մեթոդական նյութեր, ՏՀՏ գործիքակազմին տիրապետող աշխատակիցներ | |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ | | |
|---|---|---|---|
| | Կատարված չէ /0%/ | Կատարված է մասամբ /50%/ | Կատարված է ամբողջ ծավալով /100%/ |
| | V | V | V |
| Սեմինարի կազմակերպում ‘‘Ինչպես կազմել էլեկտրոնային հաշվետվություն’’ թեմայով | | | |
| Ստեղծել էլեկտրոնային հարթակ հաշվետվությունները տեղադրելու համար | | | |
| Կազմել հաշվետվություններ ներկայացնելու հստակ ձևաչափ | | | |
| Ձևավորել ՏՀՏ գործիքակազմին տիրապետող ուսուցիչների խումբ, ովքեր կօգնեն ավագ սերնդի ներկայացուցիչներին | | | |

**<u>Ուսումնական հաստատության առարկայական մեթոդական միավորումները</u>**

Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի կամ հարակից առարկաների 3 և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Դպրոցի բոլոր ուսուցիչների `առարկայական մեթոդական միավորումներում ընդգրկվածությունը պարտադիր է: Քանի որ Ջրաբերի միջնակարգ դպրոցը ունի մինչև 100 աշակերտ` ձևավորվել են միասնական առարկայական մեթոդական միավորումներ.

- Հումանիտար մեթոդական միավորում
- Բնագիտական մեթոդական միավորում

- Տարրական մեթոդական միավորում

**Մեթոդական միավորումը**

- Քննարկում է մանկավարժական խորհրդի կողմից փորձաքննության ներկայացված մեթոդական միավորման կազմում ընդգրկված ուսումնական առարկաների հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալիս երաշխավորություններ
- Քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը
- Ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում
- Նպաստում է ուսուցիչների /դասվարների/ մասնագիտական և դասավանդման որակի բարձրացմանը
- Աջակցում է ուսուցիչներին /դասվարներին/՝ ատեստավորմանը նախապատրաստվելիս
- Կազմակերպում է մասնագիտական և մանկավարժա-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ, սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ
- Սահմանված կարգով ապահովում է ուսուցիչերի մասնակցությունը փորձարկվող դասագրքերի փորձաքննությանը
- Մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն
- Կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօչենին
- Կազմակերպում է դպրոցական առարկայական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ
- Սահմանված կարգով մշակում և տնօրենի հաստատմանն է ներկայացնում քննական և ստուգողական առաջադրանքներ՝ առնվազն 3 տարբերակով, ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կազմված անհատական առարկայական պլաններ, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցներ
- Տարբեր դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ
- Առարկայական մեթոդական միավորուների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը 1 անգամ: Նիստերն արձաագրվում են:

‘‘Ջրաբերի միջնակարգ դպրոց’’ ՊՈԱԿ-ի առարկայական մեթոդական միավորումների աշխատանքը համակարգված է, առարկայական մեթոդական միավորումները կազմակերպում են առարկայական միամսյակներ, մասնագիտական տարբեր սեմինար քննարկումներ, դպրոցական առարկայական օլիմպիադաներ,առարկայական մրցույթներ: Քիչ է համագործակցությունը տարբեր առարկայական

մեթոդական միվորումների միջև: Չկան ստեղծված միջդպրոցական մեթոդական միավորումներ: Փորձի փոխանակումը առարկայական մեթոդական միավորումներում թույլ է զարգացած

| Ուսումնական հաստատության առարկայական մեթոդական միավորումների վերլուծություն | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| ✓ Առարկայական մեթոդական միավորումների համակարգված աշխատանք<br>✓ Դպրոցում ձևավորվել են միասնական առարկայական մեթոդական միավորումներ<br>✓ Առարկայական մեթոդական միավորումները կազմակերպում են առարկայական միամսյակներ, մասնագիտական տարբեր սեմինար քննարկումներ, դպրոցական առարկայական օլիմպիադաներ,առարկայական մրցույթներ | ✓ Քիչ է համագործակցությունը տարբեր առարկայական մեթոդական միվորումների միջև<br>✓ Չկան ստեղծված միջդպրոցական մեթոդական միավորումներ<br>✓ Փորձի փոխանակումը առարկայական մեթոդական միավորումներում թույլ է զարգացած |

**Նպատակ**

1. Համագործակցային մթնոլորտի զարգացում առարկայական մեթոդական միավորումների միջև

**Խնդիրներ**

1. Փորձի փոխանակման զարգացումը առարկայական մեթոդական միավորումներում
2. Համատեղ դասերի պլանավորում

| Ռիսկեր | Ռիսկերը մեղմող կամ չեզոքացնող գործողություններ |
|---|---|
| ✓ Մոտիվացիայի պակաս | ✓ Խթանել համագործակցությունը առարկայական տարբեր մեթոդական միավորումների միջև |

| Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, ֆինանսավորման աղբյուրները | Նշումներ |
|---|---|---|---|---|
| Դասալսումների կազմակերպում | Տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ | 2024թ. հունվար-փետրվար | Դասալսողների խումբ, գրենական և ՏՀՏ միջոցներ | |
| Կարիքի գնահատում | Տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ, դասղեկներ | 2024թ. մարտի առաջին շաբաթ | Կարիքի գնահատման գործիքներ,դասալսման թերթիկներ, ՏՀՏ միջոցներ, աղյուսակներ | |
| Սեմինարի կազմակերպում ՙՙՏարբեր մեթոդների կիրառումը դասապրոցեսում՚՚ թեմայով | Տնօրեն | 2024թ հունվարի երկրորդ շաբաթ | Համապատասխան կահավորված լսարան,ՏՀՏ միջոցներ Համապատասխան կարողունակություններ ունեցող աշխատակից | |
| Բաց դասերի կազմակերպում | Տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ, | 2024թ. փետրվար | ՏՀՏ միջոցներ, դիդակտիկ նյութեր, , | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ուսուցիչներ | | բաց դասի պլաններ, առարկայական ծրագիր | |
| Սեմինարի կազմակերպում ՙՙՀամատեղ դասերի պլանավորում՚՚ թեմայով | Տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ | 2024թ. մարտ | ՏՀՏ միջոցներ, դիդակտիկ նյութեր, լսարան, համապատասխան կարողունակություններ ունեցող աշխատակից | |
| Համապատասխան առարկաներից համատեղ բաց դասերի պլանավորում | Տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ, ուսուցիչներ | 2024թ. ապրիլ | ՏՀՏ միջոցներ, դիդակտիկ նյութեր, դասի պլաններ, առարկայական ծրագրեր, թեմատիկ պլաններ | |
| Արդյունքների ամփոփում և վերլուծություն | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ | 2024թ. մայիս-հունիս | ՏՀՏ միջոցներ, աղյուսակներ, գնահատման ռուբրիկներ, դասալսողների արձանագրություններ | |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ | | |
|---|---|---|---|
| | **Կատարված չէ /0%/** | **Կատարված է մասամբ /50%/** | **Կատարված է ամբողջ ծավալով /100%/** |
| | **V** | **V** | **V** |
| Դասալսումների | | | |

| | | | |
|---|---|---|---|
| կազմակերպում | | | |
| Կարիքի գնահատում | | | |
| Սեմինարի կազմակերպում ‘‘Տարբեր մեթոդների կիրառումը դասապրոցեսում’’ թեմայով | | | |
| Բաց դասերի կազմակերպում | | | |
| Սեմինարի կազմակերպում ‘‘Համատեղ դասերի պլանավորում’’ թեմայով | | | |
| Համապատասխան առարկաներից համատեղ բաց դասերի պլանավորում | | | |
| Արդյունքների ամփոփում և վերլուծություն | | | |

**<u>Ուսումնական հաստատության ծնողական խորհուրդ</u>**

Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհուրդը բաղկացած է 11 անդամներից: Հաստատության ծնողական խորհրդի աշխատանքները կազմակերպվում են ծնողական ժողովների միջոցով՝ համաձայն ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի: Հրավիրվում են դասարանական ժողովներ՝ ուսումնական տարվա ընթացքում առնվազն 4 անգամ, համադպրոցական ժողովներ՝ առնվազն 2 անգամ: Գումարված նիստերի արդյունքում կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին, Կանոնադրության պահանջներին համապատասխան: Գումարված բոլոր նիստեր համար ծնողական խորհրդի քարտուղարի կողմից կազմվում են արձանագրություններ:

Ուսումնական հաստատության ծնողական խորհրդի գործունեությունը հիմնականում կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով.

- Դպրոցի խորհրդի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան՝ իր կողմից առաջադրել է Կառավարման խորհրդի անդամության թեկնածուների: Գրանցված թեկնածուներից ընտրված են համարվում փակ քվեարկության միջոցով առավել ձայներ հավաքած 2 թեկնածու:
- Աջակցում է դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիէ ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման հարցում:
- Դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացրել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ:
- Ներկայացնում է ծնողներին անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, մասնակցում դրանց մշակման և տրամադրման միջոցառումներին:
- Ամրապնդում է դպրոցի և ծնողների միջև կապերը, մանկավարժական աշխատողների հետ ձևավորում և ծնողներին է ներկայացնում երեխաների դաստիարակության նկատմամբ միասնական պահանջներ:
- Օգնում է դպրոցին սովորողների պարտադիր կրթությունն իրականացնելու գործընթացում:
- Լսում է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին և ստացել ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները:
- Մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցում է դպրոցի ուսումնանյութական վազայի հարստացմանըէ այդ գործում ներգրավելով նաև հովանավորների:
- Մասնակցում է ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներին
- Ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում
- Ծնողներին ապահովում է տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ
- Ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին և օրենքով սահմանված պատասխանատվությանը
- Դպրոցի ծնողական խորհուրդը համագործակցում է դպրոցի մանկավարժական և այլ խորհուրդների հետ:
- Դպրոցի ծնողական խորհուրդը խարող է տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ գրավոր առաջարկ ներկայացնել դպրոցի խորհրդին:
- Ծնողական խորհրդի քարտուղարը կազմում է համադպրոցական ժողովների և դպրոցի ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունները:
- Ծնողներին ներգրավ ում է սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում:

- Աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստ և ժամանցի կազմակերպմանը:
- Մասնակցում է Ներքին գնահատման աշխատանքներին
- Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար դպրոցի ծնողական խորհուրդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել այլ լիազորություններ:

Ուսումնական հաստատությունը համագործակցում է ընտանիքների հետ, մասնակցում խնդիրների բացահայտմանը և լուծմանը: Ծնողական համակազմի համար պարբերաբար կազմակերպվել են սեմինար քննարկումներ, ֆիլմի դիտումներ հալածանքի և բռնության բացահայտման և կանխարգելման թեմաներով: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ծնողական խորհրդի անդամների նախաձեռնող են, բոլոր որոշումները կայացվում են բազմակարծիքության, մասնակցայնության և ներառականության սկզբունքի հիման վրա: Ծնողական խորհրդում կան ծնողներ, որոնք զբաղվածության հաճախ բացակայում են ծնողական խորհրդի նիստերից: Ծնողական խորհրդի կողմից չի եղել համաձայնություն երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար:

| Ուսումնական հաստատության ծնողական խորհուրդ | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| ✓ Մասնակցային ծնողական համայնք<br>✓ Ծնողական խորհուրդը ակտիվ մասնակցում է ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավմանը<br>✓ Լսում է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի, հեռանկարների մասին, անում է առաջարկներ<br>✓ Աջակցում է արտադպրոցական և արտադասարանական միջոցառումների կազմակերպմանը<br>✓ Ուսումնական հաստատությունը համագործակցում է ընտանիքների հետ, մասնակցում խնդիրների բացահայտմանը և լուծմանը<br>✓ Ծնողական համակազմի համար պարբերաբար կազմակերպվել են սեմինար քննարկումներ, ֆիլմի դիտումներ հալածանքի և բռնության բացահայտման և | ✓ Ծնողական խորհրդի որոշ անդամներ զբաղվածության պատճառով հաճախ բացակայում են նիստերից<br>✓ Ուսումնական հաստատությունը չի կազմակերպում երկարօրյա ուսուցում |

| | |
|---|---|
| կանխարգելման թեմաներով<br>✓ Ծնողական խորհրդի անդամների նախաձեռնող են, բոլոր որոշումները կայացվում են բազմակարծիքության, մասնակցայնության և ներառականության սկզբունքի հիման վրա<br>✓ Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին<br>✓ Մասնակցել են Ներքին գնահատման աշխատանքներին<br>✓ Աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստ և ժամանցի կազմակերպմանը<br>✓ Աջակցում  է դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիէ ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման հարցում | |

**Նպատակներ**

1. Շարունակել ամուր պահել ծնող-դպրոց կապը
2. Ձևավորել ծնողների կողմից որակյալ կրթության նկատմամբ պահանջարկ

**Խնդիրներ**

1. Աջակցել ծնողական խորհրդին՝ բարձրացնելու դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունները գործածության մեջ դնելու արդյունավետությունը
2. Սովորողի հետ ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողունակությունները զարգացնելու նպատակով երկարօրյա ուսուցման կազմակերպում:
3. Ծնողների առավել ներգրավվածություն՝ որպես կրթական գործընթացի մասնակից
4. Ծնողների աջակցությամբ երկարօրյա ուսուցման կազմակերպում

| Ռիսկեր | Ռիսկերը մեղմող կամ չեզոքացնող գործողություններ |
|---|---|
| ✓ Ծնողների մոտիվացիայի պակաս | ✓ Անհատական աշխատանք տանել յուրաքանչյուր ծնողի հետ |

| Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, ֆինանսավորման աղբյուրները | Նշումներ |
|---|---|---|---|---|
| Շանունակել կիրառել առկա համագործակցության ձևերը՝ կիրառելով նաև նոր մեթոդներ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, դասղեկներ, ՏՄԱԿ | 2023-2028թթ. | Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ | |
| Ուսումնական հաստատության ծնողական խորհրդի անդամներին մասնակից դարձնել կրթական ծրագրերին, դպրոցում կազմակերպվող միջոցառումներին | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, դասղեկներ | 2023-2028թթ, | Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ | |
| Շարունակել ծնողական խորհրդի անդամների մասնակից դարձնել Ներքին գնահատման աշխատանքներին | Տնօրեն, տնօրենի տեղակալ | 2023-2028թթ. | Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ | |
| Լսել բոլորի կարծիքները, առաջարկները և | Տնօրեն, տնօրենի տեղակալ , | 2023-2028թթ. | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| դիտարկումները | մանկավարժական համակազմ, դասղեկներ | | | |
| Անհատական աշխատանք տանել պասիվ ծնողների հետ՝ ներգրավվածությանը նպաստելու համար | Տնօրեն, տնօրենի տեղակալ , մանկավարժական համակազմ, դասղեկներ, ծնողական խորհուրդ | 2023-2028թթ. | | |
| Կազմակերպել երկաօրյա ուսուցում՝ ընդգրկելով ցածր առաջադիմություն ունեցող և ԿԱՊԿՈՒ սովորողներին | Տնօրեն, տնօրենի տեղակալ , մանկավարժական համակազմ, դասղեկներ, ծնողական խորհուրդ | 2024թ. սեպտեմբերից | Երկարօրյա խմբակի ծրագիր, համապատասխան մանկավարժ, ծնողի համաձայնություն, դիդակտիկ նյութեր, ուսումնաօժանդակ պարագաներ, համակարգիչ, ինտերնետ կապ | |
| Անհատական աշխատանք տանել յուրաքանչյուր ծնողի հետ՝ բացատրելով որակյալ կրթության դերի կարևորությունը | Տնօրեն, տնօրենի տեղակալ , մանկավարժական համակազմ, դասղեկներ, | 2023-2028թթ. | | |
| Ներգրավվել ծնողներին դպրոցում որոշումների կայացման գործում | Տնօրեն, տնօրենի տեղակալ , մանկավարժական համակազմ, դասղեկներ, ծնողական խորհուրդ | 2023-2028թթ. | Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ | |
| Կազմակերպել սեմինար-քննարկումներ ‘‘Հալածանքի, օտարման և բռնության բացահայտումը և կանխարգելումը’’ | Տնօրեն, տնօրենի տեղակալ , ծնողական խորհուրդ, Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ | 2024թ. մարտ-ապրիլ | Համապատասխան կահավորված լսարան,պաստառներ, ՏՀՏ միջոցներ, համապատասխան որակավորում ունեցող | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| թեմայով | | | աշխատակից | |
| Ծնողների հետ անհատական աշխատանք տանել երեխայի կարիքի գնահատման հարցերով և համակողմանի բացատրել դրա անհրաժեշտությունը, պարբերաբար ներկայացնել հաշվետվություններ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, հոգեբան, ՏՄԱԿ | 2023-2028թթ. | Հաշվետվություններ | |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ | | |
|---|---|---|---|
| | **Կատարված չէ /0%/** | **Կատարված է մասամբ /50%/** | **Կատարված է ամբողջ ծավալով /100%/** |
| | **V** | **V** | **V** |
| Շանունակել կիրառել առկա համագործակցության ձևերը՝ կիրառելով նաև նոր մեթոդներ | | | |
| Ուսումնական հաստատության ծնողական խորհրդի անդամներին մասնակից դարձնել կրթական ծրագրերին, դպրոցում կազմակերպվող | | | |

| | | | |
|---|---|---|---|
| միջոցառումներին | | | |
| Շարունակել ծնողական խորհրդի անդամների մասնակից դարձնել Ներքին գնահատման աշխատանքներին | | | |
| Լսել բոլորի կարծիքները, առաջարկները և դիտարկումները | | | |
| Անհատական աշխատանք տանել պասիվ ծնողների հետ՝ ներգրավվածությանը նպաստելու համար | | | |
| Կազմակերպել երկաօրյա ուսուցում՝ ընդգրկելով ցածր առաջադիմություն ունեցող և ԿԱՊԿՈՒ սովորողներին | | | |
| Անհատական աշխատանք տանել յուրաքանչյուր ծնողի հետ՝ բացատրելով որակյալ կրթության դերի կարևորությունը | | | |
| Ներգրավվել ծնողներին դպրոցում որոշումների կայացման գործում | | | |
| Կազմակերպել սեմինար-քննարկումներ ՝՝Հալածանքի, օտարման և բռնության բացահայտումը | | | |

| | | | |
|---|---|---|---|
| և կանխարգելումը’’ թեմայով | | | |
| Ծնողների հետ անհատական աշխատանք տանել երեխայի կարիքի գնահատման հարցերով և համակողմանի բացատրել դրա անհրաժեշտությունը, պարբերաբար ներկայացնել հաշվետվություններ | | | |

## <u>Աշակերտական խորհուրդ:</u>

Դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է, որն ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան: Աշակերտները կարող են նաև ըստ հետաքրքրությունների ստեղծել ակումբներ, միավորումներ, որոնք աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ են: Դպրոցի աշակերտական խորհուրդը ունի լիովին անկախություն: Դպրոցի տնօրինությունը խթանում է աշակերտական խորհրդի նախաձեռնությունները և օժանդակում դրանց իրագործմանը: Աշակերտական խորհուրդը տեղյակ է համայնքի հիմնախնդիրներին, բազում անգամներ մասնակցել է համայնքի հիմնախնդիրների վերհանմամբ, գտել է լուծման ուղիներ, ներկայացրել է համայնքի ղեկավարին: Օրինակ՝ 2018-2019թթ. սովորողները համայնքի հիմնախնդիրները վերհանելիս, առաջնայնությունը տվել են համայնքում խմելու ջրի խնդրին, կազմել են խնդիր լուծման իրենց մոտեցումը՝ համայնքում խմելու ջրի խնդիրը լուծել սուբվենցիոն ծրագրերին դիմելու միջոցով, և ներկայացրել համայնքի վարչական մասի ղեկավարին: Համայնքի վարչական մասի ղեկավարը՝ հաշվի առնելով աշակերտների վեր հանած խնդիրը և նրանց առաջարկած լուծումները, դիմել է խոշորացված համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարն էլ չի մերժել աշակերտների առաջարկը և դիմել է ՀՀ կառավարությանը ծրագրին լուծում տալու համար: Այսօր Ջրաբեր համայնքը ունի ամբողջությամբ նոր պոմպակայան, փոխված նոր ջրագիծ և 24 ժամյա ջրամատակարարում ի շնորհիվ մեր դպրոցի աշակերտների: Աշակերտական խորհրդում որոշումները կայացվում են բոլորի կարծիքը և

ծայնը հաշվի առնլով, տիրում է մասնակցային, ներառական և բազմակարծիք արժեքային միջավայր: Աշակերտական համակազմը ակտիվորեն մասնակցում է համապետական և դպրոցական շաբաթօրյակներին, սեփական նախաձեռնությամբ խնամում են դպրոցամերձ տարածքը և այգին: Այգուց ստացված միրգը հավաքում են, որից պատրաստում են չիր, իսկ չիրը օգտագործվում է դպրոցի ճաշարանում՝ ՙՙԴպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն՚՚ ազգային ծրագրի շրջանակում: Աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ դպրոցում կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ: Կազմակերպվել է տարբեր հանդիպում քննարկումներ, սեմինարներ ՏՄԱԿԻ աջակցությամբ՝ ՙՙՄասնագիտական կողմնորոշում՚՚, ՙՙԵս դեռահաս եմ՚՚, ՙՙԲուլինգը դպրոցում՚՚ և այլ ակտուալ թեմաներով: Աշակերտների հետ պարբերաբար աշխատանքներ են տարվում հալածանքի, օտարկման և բռնության դեպքերը բացառելու համար: Աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ, 44-օրյա պատերազմի առաջին իսկ օրերից, /մանկավարժական համակազմ, ծնողական համակազմ և աշակերտական համակազմ/ համագործակցելով ՙՙՀանուն սահմանի՚՚, ՙՙՄիասնության թիկունք՚՚ և ՙՙՄիասնության դրոշ՚՚ ՀԿ-ների հետ գործում են քողարկման ցանցեր, գուլպաներ, գլխարկներ, ժիլետներ, կարում են ՀՀ պետական դրոշ, որոնք ամենամսյ պարբերականությամբ ուղարկվում են սահմանային զորամասեր: Աշակերտական խորհուրդը արժանացել է Պաշտպանության բանակի պատվոգրով:










ՋՐԱԲԵՐԻ
ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑ


ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿ
ՊԱՏՎՈԳԻՐ
Պարգևատրվում է
29130
«23» 04 2021 թ.



| Աշակերտական խորհուրդի վերլուծություն | |
|---|---|
| **Ուժող կողմեր** | **Թույլ կողմեր** |
| ✓ Դպրոցի աշակերտական խորհուրդը ունի լիովին անկախություն<br>✓ Դպրոցի տնօրինությունը խթանում է աշակերտական խորհդի նախաձեռնությունները և օժանդակում դրանց իրագործմանը<br>✓ Աշակերտական խորհուրդը նախաձեռնող է<br>✓ Աշակերտական խորհուրդը տեղյակ է համայնքի հիմնախնդիրներին, բազում անգամներ մասնակցել է համայնքի հիմնախնդիրների վերհանմամը, գտել է լուծման ուղիներ, ներկայացրել է համայնքի ղեկավարին<br>✓ Աշակերտական խորհուրդի առաջարկած ուղիներով լուծվել է համայնքի խմելու ջրի խնդիրը<br>✓ Աշակերտական խորհրդում որոշումները կայացվում են բոլորի կարծիքը և ձայնը հաշվի առնլով, տիրում է մասնակցային, ներառական և բազմակարծիք արժեքային միջավայր<br>✓ Աշակերտական համակազմը ակտիվորեն մասնակցում է համապետական և դպրոցական շաբաթօրյակներին, սեփական նախաձեռնությամբ խնամում են դպրոցամերձ տարածքը և այգին<br>✓ Աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ դպրոցամերձ այգուց ստացված միրգը հավաքում են, որից պատրաստում են չիր, իսկ չիրը օգտագործվում է դպրոցի ճաշարանում՝ ՝՝Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն՛՛ ազգային ծրագրի շրջանակում<br>✓ Աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ դպրոցում կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ<br>✓ Կազմակերպվել է տարբեր հանդիպում քննարկումներ, | |

| | |
|---|---|
| սեմինարներ ՏՄԱԿԻ աջակցությամբ՝ ‘‘Մասնագիտական կողմնորոշում’’, ‘‘Ես դեռահաս եմ’’, ‘‘Բուլինգը դպրոցում’’ և այլ ակտուալ թեմաներով<br>✓ Աշակերտների հետ պարբերաբար աշխատանքներ են տարվում հալածանքի, օտարկման և բռնության դեպքերը բացառելու համար<br>✓ Աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ, 44-օրյա պատերազմի առաջին իսկ օրերից, /մանկավարժական համակազմ, ծնողական համակազմ և աշակերտական համակազմ/ համագործակցելով ‘‘Հանուն սահմանի’’, ‘‘Միասնության թիկունք’’ և ‘‘Միասնության դրոշ’’ ՀԿ-ների հետ գործում են քողարկման ցանցեր, գուլպաներ, գլխարկներ, ժիլետներ, կարում են ՀՀ պետական դրոշ, որոնք ամենամսյա պարբերականությամբ ուղարկվում են սահմանային զորամասեր<br>✓ Աշակերտական խորհուրդը արժանացել է Պաշտպանության բանակի պատվոգրով | |

## ՆՊԱՏԱԿ

1. Նպաստել աշակերտական խորհրդի ինքնավարությանը

## ԽՆԴԻՐ

1. Աշակերտական խորհրդի ինքնավարության խթանում

| **Ռիսկեր** | **Ռիսկերը մեղմող կամ չեզոքացնող գործողություններ** |
|---|---|
| ✓ Աշակերտների մոտ մոտիվացիայի պակաս | ✓ Մոտիվացնող գործիքակազմի մշակում / պատվոգրեր, շնորհակալագրեր, խրախուսումներ և այլն/ |

| Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, ֆինանսավորման աղբյուրները | Նշումներ |
|---|---|---|---|---|
| Էլեկտրոնային հարցումների միջոցով պարզել և մշակել աշակերտական խորհրդի լիարժեք ինքնավարությանը նպաստող գործիքակազմ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, դասղեկներ, հոգեբան, աշակերտական խորհուրդ | 2024թ. հունվար-փետրվար | ՏՀՏ գործիքներ, հարցաշար, ինտերնետ կապ | |
| Աշակերտների շրջանում վաղ հայտնաբերել, կանխել և բացառել հալածանքի, օտարման, բռնության դեպքերը | Տնօրեն, տնօրենի տեղակալ, դասղեկներ, մանկավարժական համակազմ, հոգեբան | 2023-2028թթ. | | |
| Դպրոցում իրականացվող բոլոր միջոցառումներին ներգրավել աշակերտական խորհրդին | Տնօրեն, տնօրենի տեղակալ, դասղեկներ,մանկավարժական համակազմ, հոգեբան | 2023-2028թթ. | | |
| Կազմակերպել ինտելեկտուալ մրցումներ տարբեր դասարանների միջև | Կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող, մանկավարժական | 2023-2028թթ. | Պլաններ, հարցաշարեր, պատվոգրեր, շնորհակալագրեր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համակազմ, դասղեկներ | | | |
| Կազմակերպել սեմինար-քննարկում ‘‘Բուլինգը և կոնֆլիկտները դպրոցում’’ թեմայով | Կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող, մանկավարժական համակազմ, դասղեկներ, էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ, ՏՄԱԿ | 2024թ. ապրիլ-մայիս, պարբերաբար | ՏՀՏ գործիքակազմ, կահավորված լսարան, դիդակտիկ նյութեր, ինտերնետ կապ, համապատասխան որակավորում ունեցող աշխատակից | |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ | | |
|---|---|---|---|
| | **Կատարված չէ /0%/** | **Կատարված է մասամբ /50%/** | **Կատարված է ամբողջ ծավալով /100%/** |
| | **V** | **V** | **V** |
| Էլեկտրոնային հարցումների միջոցով պարզել և մշակել աշակերտական խորհրդի լիարժեք ինքնավարությանը նպաստող գործիքակազմ | | | |
| Աշակերտների շրջանում վաղ հայտնաբերել, կանխել | | | |

| | | | |
|---|---|---|---|
| և բացառել հալածանքի, օտարման , բռնության դեպքերը | | | |
| Դպրոցում իրականացվող բոլոր միջոցառումներին ներգրավել աշակերտական խորհրդին | | | |
| Կազմակերպել ինտելեկտուալ մրցումներ տարբեր դասարանների միջև | | | |
| Կազմակերպել սեմինար-քննարկում ‘‘Բուլինգը և կոնֆլիկտները դպրոցում’’ թեմայով | | | |

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ստորև ներկայացնում եմ ՀՀ կոտայքի մարզի ՙՙՁրաբերի միջնակարգ դպրոց՚՚ ՊՈԱԿ-ի 2023-2028թթ. Զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման համընդհանուր չափանիշները, որոնք կարող են չափել դպրոցի զարգացման ծրագրի կատարողականը:

| ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ |
|---|---|---|
| 1. Ուսումնական հաստատության շենքային պայմանների արդիականացում | ➢ Գերազանց | Կատարվել են նախատեսված աշխատանքների 100 %-ը |
| | ➢ Լավ | կատարվել են նախատեսված աշխատանքների 70 %-ը |
| | ➢ Բավարար | Կատարվել են նածատեսված աշխատանքների 40 %-ը |
| | ➢ Վատ | Նախատեսված աշխատանքները չեն կատարվել |
| 2. Նյութատեխնիկական պարագաների ձեռքբերում | ➢ Գերազանց | Ձեռք է բերվել նախատեսված գույքի 100 %-ը |
| | ➢ Լավ | Ձեռք է բերվել նախատեսված գույքի 70 %-ը |
| | ➢ Բավարար | Ձեռք է բերվել նախատեսված գույքի 40 %-ը |
| | ➢ Վատ | Նախատեսված գույքը ձեռք չի բերվել |
| 3. Համայնքի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության խորացում | ➢ Գերազանց | ՏԻՄ-ի և գործընկերների միջև ձևավորվել է մշտական համագործակցություն, ծնողական համայնքը ակտիվ ներգրավված է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքներում |
